# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ու Մ*

*22 մայիսի 2019թվականի N 565*

*ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԻ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅԱՆ, ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ՊԱՐՍՊԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ, ԱՎՏՈՏՆԱԿԻ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅԱՆ, ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ՊԱՐՍՊԻ ՈՒ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ*

*Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ մասի, Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով, Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնի 2019 թվականի մարտի 15-ի թիվ 7 մասնագիտական եզրակացությունը և հաշվի առնելով կառույցներն ու հողամասը կառույցներն իրականացրած անձին գնման նախապատվության իրավունքով՝ ուղղակի վաճառքի միջոցով օտարելու վերաբերյալ 2019 թվականի մայիսի 16-ի N 490 գրավոր առաջարկությունը և Վահե Վարդանյանի կողմից տրված 2019 թվականի մայիսի 20-ի թիվ 218 գրավոր համաձայնագիրը.*

## *<u>Ո Ր Ո Շ Ու Մ Ե Մ</u>՝*

*1.Հրազդան համայնքի սեփականություն հանդիսացողՀարավային թաղամասի Շահումյան փողոց 338/2հասցեումգտնվող՝ 133.76քմ մակերեսով ավտոտնակը, 91.54քմ մակերեսով տնտեսական շինությունը, 120.82քմ մակերեսով բնակելի տունը, 7.06քմ մակերեսով պարիսպը ճանաչել օրինական:*

*2.Հրազդան քաղաքի Հարավային թաղամասի Շահումյան փողոց 338/2 հասցեում գտնվող Հրազդան համայնքի սեփականությունը հանդիսացող, սույն որոշման 1-ին կետով օրինական ճանաչված 133.76քմ մակերեսով ավտոտնակը գինը սահմանել 174000 /մեկ հարյուր յոթանասունչորս հազար/ դրամ, 91.54քմ մակերեսով տնտեսական շինությունը գինը սահմանել 239000 /երկու հարյուր երեսունինը հազար/ դրամ, 120.82քմ մակերեսով բնակելի տունը գինը սահմանել 472000 /չորս հարյուր յոթանասուներկու հազար/ դրամ, 7.06քմ մակերեսով պարիսպը /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 13052019-07-0096 գաղտնաբառ՝ J75EMGGSLGA4/*

*գինը սահմանել 19000 /տասնինը հազար/ դրամ և նույն հասցեում տարածագնահատման 3-րդ գոտում գտնվող ավտոտնակի, տնտեսական շինության, բնակելի տան, պարսպի համար առանձնացված 499.14քմ մակերեսով հողամասը 620000 /վեց հարյուր քսան հազար/ դրամ կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքի միջոցով օտարել կառույցներն իրականացրած անձ՝ Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Շահումյան փողոցի թիվ 336 տան բնակիչ Վահե Վարդանյանին (այսուհետ գնորդ):*

*3.Գնորդը պարտավոր է գնման առաջարկն ընդունելուց հետո 30-օրյա ժամկետում որոշման 2-րդ կետով ավտոտնակի, տնտեսական շինության, բնակելի տան, պարսպի համար սահմանված գումարները վճարել Հրազդան համայնքի բյուջեի թիվ 900125001504, իսկ հողամասի համար սահմանված գումարը թիվ 900125001140 գանձապետական հաշիվներին:*

*4.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնին:*

*5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

*22 մայիսի 2019թ.*
*ք.Հրազդան*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*22 մայիսի 2019թվականի N 566*

## *ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, հիմք ընդունելով դիմումատուի հայտը և Հրազդան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 14-ի N 159-Ն որոշմամբ հաստատված հավելվածը.*

*<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ</u>՝*

*1.Անհատ ձեռնարկատեր Գոհար Խաչատրյանին տալ ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն՝ մինչև 2019 թվականի հունիսի 30-ը՝ առաջին և երկրորդ եռամսյակների համար /գրանցման հասցե՝ Կոտայքի մարզ, գյուղ Սոլակ, 4-րդ թաղամաս, տուն 18, գործունեության հասցե՝ քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, 73 շենք /առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն, մինչև 50 քառակուսի մետր մակերես//:*

*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

*22 մայիսի 2019թ.*
*ք.Հրազդան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *ՈՐՈՇՈՒՄ*

*23 մայիսի 2019թվականի N 567*

## *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 18-ի N 1180-Ն որոշման հավելվածի 33-րդ կետի 4-րդ ենթակետի և 34-րդ կետի, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի 2013 թվականի հունիսի 7-ի <<Տարահանման մարմինների փաստաթղթերի օրինակելի ձևերին հավանություն տալու և գործածության մեջ դնելու մասին>> N 501-Ա հրամանի՝ և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2013 թվականի հունիսի 27-ի թիվ 275-Ա որոշման 3-րդ կետի պահանջները, արտակարգ իրավիճակների և ռազմական դրության ժամանակ նախապես բնակչության, նյութական ու մշակութային արժեքների տարահանման պլանավորման, նախապատրաստման և անցկացման ապահովման նպատակով՝*

## *ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝*

*1.Ստեղծել՝*

*1)Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի բնակչության տարահանման հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով)՝ համաձայն N 1 հավելվածի:*

*2) հանձնաժողովի կազմում՝ աշխատանքային խմբեր՝ համաձայն N 2 հավելվածի:*

*2.Հաստատել հանձնաժողովի կանոնադրությունը՝ համաձայն N 3 հավելվածի:*

*3.Հրազդան համայնքի «Դրամատիկական թատրոն», «Արվեստի դպրոց» և «2-րդ երաժշտական դպրոց», «Երիտասարդական մարզամշակութային ուսումնական կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների բազայի վրա ստեղծել տարահանման (ընդունման) հավաքակայան, որոնց պետ ի պաշտոնե համարել տվյալ հաստատությունների տնօրեններին:*

*4.Տարահանման (ընդունման) հավաքակայանի պետին՝ 10-օրյա ժամկետում հաստատման ներկայացնել հավաքակայանի անձնակազմի պարտականությունները՝ համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչության հետ:*

*5.Ստեղծել երկարատև բնակության կետեր.*

*թիվ 1 ԵԲԿ /թիվ 2 նախադպրոցական ուսումնական հաստատություն, հասցե՝ Հարավային թաղամաս/*

*թիվ 2 ԵԲԿ / թիվ 7 նախադպրոցական ուսումնական հաստատություն, հասցե՝ Հարավային թաղամաս/*

թիվ 3 ԵԲԿ /թիվ 13 նախադպրոցական ուսումնական հաստատություն, հասցե՝ Հարավային թաղամաս/
թիվ 4 ԵԲԿ /թիվ 5 նախադպրոցական ուսումնական հաստատություն, հասցե՝ Վանատուր թաղամաս/
թիվ 5 ԵԲԿ /թիվ 6 նախադպրոցական ուսումնական հաստատություն, հասցե՝ Կենտրոն թաղամաս/
թիվ 6 ԵԲԿ /թիվ 15 նախադպրոցական ուսումնական հաստատություն, հասցե՝ Կենտրոն թաղամաս/
թիվ 7 ԵԲԿ /թիվ 16 նախադպրոցական ուսումնական հաստատություն, հասցե՝ Կենտրոն թաղամաս/
թիվ 8 ԵԲԿ /թիվ 4 նախադպրոցական ուսումնական հաստատություն, հասցե՝ Կենտրոն թաղամաս/
թիվ 9 ԵԲԿ /թիվ 8 նախադպրոցական ուսումնական հաստատություն, հասցե՝ Միկրոշրջան թաղամաս/
թիվ 10 ԵԲԿ /թիվ 9 նախադպրոցական ուսումնական հաստատություն, հասցե՝ Միկրոշրջան թաղամաս/
թիվ 11 ԵԲԿ /թիվ 11 նախադպրոցական ուսումնական հաստատություն, հասցե՝ Միկրոշրջան թաղամաս/
թիվ 12 ԵԲԿ /թիվ 12 նախադպրոցական ուսումնական հաստատություն, հասցե՝ Միկրոշրջան թաղամաս/

6. Ստեղծել ժամանակավոր տեղակայման կետեր Հրազդան քաղաքի
թիվ 1 ԺՏԿ / թիվ 1 ավագ դպրոց, Հարավային թաղամաս/
թիվ 2 ԺՏԿ / թիվ 4 հիմնական դպրոց, Հարավային թաղամաս/:
թիվ 3 ԺՏԿ / թիվ 1 երաժշտական դպրոց, Հարավային թաղամաս/:
թիվ 4 ԺՏԿ / թիվ 8 հիմնական դպրոց, Կենտրոն թաղամաս/:
թիվ 5 ԺՏԿ / թիվ 14 հիմնական դպրոց, Կենտրոն թաղամաս/:
թիվ 6 ԺՏԿ /Մանկապատանեկան մարզադպրոց, Կենտրոն թաղամաս/:
թիվ 7 ԺՏԿ / Հրազդանի պետական քոլեջ, Կենտրոն թաղամաս/:
թիվ 8 ԺՏԿ / թիվ 6 հիմնական դպրոց, Վանատուր թաղամաս/:
թիվ 9 ԺՏԿ / թիվ 11 հիմնական դպրոց, Միկրոշրջան թաղամաս/:
թիվ 10 ԺՏԿ / թիվ 5 հիմնական դպրոց, Միկրոշրջան թաղամաս/:
թիվ 11 ԺՏԿ / թիվ 9 հիմնական դպրոց, Միկրոշրջան թաղամաս/:
թիվ 12 ԺՏԿ / թիվ 12 հիմնական դպրոց, Միկրոշրջան թաղամաս/:

7. Աջակցել համայնքի տարածքում գործող կազմակերպությունների ղեկավարներին՝ երկամյա ժամկետում ստեղծել օբյեկտային տարահանման հանձնաժողովներ:

8. Մշակել տարահանման (ընդունման) հավաքակայանների կառուցվածքային մարմինների պարտականությունները և երկամյա ժամկետում ներկայացնել համայնքի տարահանման հանձնաժողովի հաստատմանը:

9. Հանձնաժողովները և հավաքակայանները ստեղծել Հայաստանի Հանրապետության Արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչության հետ համաձայնեցնելով:

10. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Հրազդան համայնքի ղեկավարի տեղակալ Վ.Սաֆարյանի վրա:

11. Ուժը կորցրած ճանաչել Հրազդան համայնքի ղեկավարի 2013 թվականի օգոստոսի 22-ի N594Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

23 մայիսի 2019թ.
ք.Հրազդան

ՀԱՎԵԼՎԱԾ 1
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 23-Ի
N567 ՈՐՈՇՄԱՆ

## ԿԱԶՄ
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

| | |
|---|---|
| 1.Սաֆարյան Վարուժ | Հանձնաժողովի նախագահ, Հրազդան համայնքի ղեկավարի տեղակալ |
| 2.Դանիելյան Ռոբերտ | Հանձնաժողովի նախագահի տեղակալ, աշխատակազմի քարտուղար |
| 3.Առաքելյան Հայկազ | հանձնաժողովի քարտուղար տրանսպորտի, առևտրի և սպասարկումների կանոնակարգման բաժնի պետ |

Հանձնաժողովի անդամներ՝

| | |
|---|---|
| 1. Մնացականյան Անահիտ | համայնքի ղեկավարի խորհրդական |
| 2. Հակոբյան Երվանդ | Տարածքային զարգացման,հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնի պետ |
| 3. Հայրապետյան Արմեն | Ոստիկանության Հրազդանի բաժնի պետի ծառայության գծով տեղակալ |
| 4. Եփրեմյան Արևիկ | ֆինանսական բաժնի պետ |
| 5.Բաբայան Արամ | բնակֆոնդի շահագործման և կոմունալ տնտեսության բաժնի պետ |
| 6.Մարգարյան Պետիկ | Տարածքային զարգացման,հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնի պետի տեղակալ |
| 7.Մարգարյան Վահագ | Հրազդանի համայնքապետարանի «Մշակույթի Կենտրոն» -ի տնօրեն |
| 8. Գևորգյան Գրիգոր | «Վեոլիա-Ջուր» ՓԲԸ Հրազդան տեղամասի շահագործման պետ |

9. Ներսիսյան Հրաչ | ՀԷՑ ՓԲԸ « Գեղամա» մասնաճյուղի Հրազդան ցանցի ճարտարագետ

10. Սերգեյ Սարկիսով ճարտարագետ | «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ

ՀԱՎԵԼՎԱԾ 2
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 23-Ի
N567 ՈՐՈՇՄԱՆ

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1. Վտանգավոր տարածքից բնակչության դուրս բերման հաշվառման խումբ.

| | |
|---|---|
| 1) Գալստյան Արթուր | խմբի ղեկավար, Հրազդանի համայնքապետարանի «Մաքուր Հրազդան» ՀՈԱԿ-ի տնօրեն |
| 2) Այվազյան Արմեն | անդամ, կրթության, մշակույթի և սպորտի բաժնի գլխավոր մասնագետ |
| 3) Պողոսյան Վահե | անդամ, բնակֆոնդի շահագործման և կոմունալ տնտեսության բաժնի առաջատար մասնագետ |
| 4)Միքայելյան Մանվել | անդամ, բնակֆոնդի շահագործման և կոմունալ տնտեսության բաժնի գլխավոր մասնագետ |
| 5) Ներսիսյան Հայկարամ | Լիազոր ներկայացուցիչ Վանատուր թաղամասում |
| 6) Կոտանյան Ստեփան | Լիազոր ներկայացուցիչ Ջրառատ թաղամասում |
| 7) Կասպարյան Ղևոնդ | «Նարեկ» համատիրության նախագահ |

2. Անվտանգ գոտում բնակչության տեղաբաշխման հաշվառման խումբ.

1) Նազարյան Անահիտ — Խմբի ղեկավար, Հրազդան համայնքի ղեկավարի խորհրդական

2) Հակոբյան Գուրգեն — անդամ, տարածքային զարգացման,հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ

3)Լևոնյան Համիկ — անդամ, տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ

4)Մուրադյան Նարեկ — անդամ, բնակֆոնդի շահագործման և կոմունալ տնտեսության բաժնի 1-ին կարգի մասնագետ

3. Տրանսպորտային ապահովման խումբ.

1) Զաքարյան Նարեկ — խմբի ղեկավար, տրանսպորտի, առևտրի և սպասարկումների կանոնակարգման բաժնի գլխավոր մասնագետ

2) Զոհրաբյան Վարուժան — անդամ, տրանսպորտի, առևտրի և սպասարկումների կանոնակարգման բաժնի գլխավոր մասնագետ

3) Մարգարյան Արայիկ — անդամ, աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ

4)Կարապետյան Լուսինե — անդամ, տրանսպորտի, առևտրի և սպասարկումների կանոնակարգման բաժնի գլխավոր մասնագետ

4. Սննդամթերքի և նյութական արժեքների պաշարների հաշվառման խումբ.

1) Մաթևոսյան Գոռ — խմբի ղեկավար, աշխատակազմի հարկային բաժնի պետ

2) Ղարագյոզյան Հայկ — անդամ, հարկային բաժնի գլխավոր մասնագետ

3)Ալեքսանյան Վահե — անդամ, տրանսպորտի, առևտրի և սպասարկումների կանոնակարգման բաժնի 1-ին կարգի մասնագետ

4) Աթոյան Աշոտ — անդամ, հարկային բաժնի առաջատար մասնագետ

ՀԱՎԵԼՎԱԾ 3
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 23-Ի
N567 ՈՐՈՇՄԱՆ

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

## I. Ընդհանուր դրույթներ

1.1 Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի տարահանման հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) մասին Կանոնադրությունը սահմանում է հանձաժողովի ստեղծման կարգը, կազմը և հիմնական խնդիրները խաղաղ պայմաններում, արտակարգ իրավիճակների ծագման դեպքում և ռազմական դրության ժամանակ:

1.2 Հանձնաժողովը ստեղծվում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ղեկավարի որոշմամբ, որպես մշտական գործող տարահանման մարմին՝ բնակչության, նյութական և մշակութային արժեքների անվտանգ տարածքներ տարահանման միջոցառումների նախօրոք պլանավորման, տարահանման մարմինների ստեղծման ու նախապատրաստման և տարահանման միջոցառումների անցկացման ու բազմակողմանի ապահովման նպատակով:

1.3 Հանձնաժողովի գործունեության ընդհանուր ղեկավարումը իրականացնում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ղեկավարը: Հանձնաժողովի անմիջական ղեկավարումը դրվում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ղեկավարի տեղակալի՝ հանձնաժողովի նախագահի վրա:

1.4 Հանձնաժողովն աշխատում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության հետ համագործակցությամբ, որն իրականացնում է նրա գործունեության կազմակերպա-մեթոդական ապահովումը:

1.5 Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է «Քաղաքացիական պաշտպանության մասին» և «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով, այլ նորմատիվ-իրավական փաստաթղթերով և սույն Կանոնադրությամբ:

## 2. Հանձնաժողովի հիմնական խնդիրները

2.1. Խաղաղ ժամանակ՝

- Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչության հետ համատեղ ռազմական դրության ժամանակ և արտակարգ իրավիճակների ծագման ու սպառնալիքի դեպքում բնակչության տարահանման պլանի մշակում և տարին մեկ անգամ ճշգրտում,
- տարահանման մարմինների ստեղծման, համալրման և նախապատրաստման վերահսկողություն,
- անվտանգ գոտում տարահանվող բնակչության, նյութական և մշակութային արժեքների տեղաբաշխման վայրերի ընտրում,

- տարահանման պլանների, ինչպես նաև տարահանվող բնակչության անվտանգ գոտում ընդունման և տեղաբաշխման, առաջնահերթ կենսաապահովման պլանների մշակման ընթացքի վերահսկողություն,
- մասնակցություն տարահանման մարմինների տարահանման միջոցառումների անցկացման պատրաստականության ստուգմանը: Նիստերի պարբերաբար անցկացում ստուգման արդյունքների վերլուծման համար,
- զինվորական հրամանատարության հետ փոխհամագործակցության կազմակերպումը՝ տարահանման միջոցառումների պլանավորման, ապահովման և անցկացման հարցերով,
-- մասնակցություն քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության հարցերով ուսումնավարժություններին՝ մշակված տարահանման փաստաթղթերի իրականության ստուգման և տարահանման միջոցառումների կազմակերպման և անցկացման հարցերով գործնական հմտությունների ձեռքբերման նպատակով,
- բնակչության, նյութական և մշակութային արժեքների անվտանգ գոտում ընդունման և տեղաբաշխման նախապատրաստման վերահսկողություն, տարահանման փաստաթղթերի մշակում և հաշվառում:

2.2 Քաղաքացիական պաշտպանության համակարգը խաղաղից ռազմական դրության փոխադրելու դեպքում՝

- կառավարման, կապի և ազդարարման համակարգերի պատրաստականության բերման, ինչպես նաև տարահանման մարմինների ծավալման վերահսկողություն,
- տարահանվող բնակչության թվաքանակի և կարգի ճշգրտում, տարահանման պլանների, տարահանման բոլոր տեսակների ապահովման իրականացման և կարգի ճշգրտում ,
- բժշկական հաստատությունների, նյութական և մշակութային արժեքների անվտանգ գոտի դուրս բերման նախապատրաստման վերահսկողություն,
- վտանգավոր գոտուց, ինչպես նաև տարահանման միջանկյալ կետերից բնակչության դուրս բերման և անվտանգ վայրերում տեղաբաշխման համար հատկացված տրանսպորտային միջոցների նախապատրաստման վերահսկողություն,
- առկա պաշտպանական կառույցների պատրաստականության բերման վերահսկողություն,
- տարահանման հանձնաժողովի հետ անվտանգ գոտում ընդունման, տեղաբաշխման և բնակչության առաջնահերթ կենսաապահովման պլանների ճշգրտում:

Տարահանման անցկացման կարգադրություն ստանալիս՝

- տարահանման մարմինների կողմից ժամանակին ազդարարման, հավաքի և տարահանված բնակչությանը անվտանգ վայրեր տեղափոխելու աշխատանքների վերահսկողություն,
- տարահանման միջոցառումների բազմակողմանի ապահովման, ընդունման, բաշխման և անվտանգ գոտում տարահանված բնակչության առաջնահերթ կենսաապահովման աշխատանքների կազմակերպում և վերահսկողություն,
- հարևան համայնքների հետ փոխգործողությունների կազմակերպում՝ նրանց տարածքներում տարահանված բնակչության ընդունման և բաշխման հարցերով,
- տարահանման միջոցառումների անցկացման և ապահովման համար տարահանման մարմիններին անհրաժեշտ օգնության ցուցաբերում,
- տարահանման պլանի կատարման, տարահանման պլանի ճշգրտման ուղղությամբ առաջարկությունների մշակմանը վերահսկողություն,
- բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանման մասին տվյալների հավաք և ամփոփում, դրա մասին զեկուցում վերադասին:

2.3 Խաղաղ ժամանակ բնական և տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակների ծագման սպառնալիքի դեպքում՝

- տարահանվող բնակչության ընդունման և տեղաբաշխման պլանավորում,
- կապի և ազդարարման համակարգերի պատրաստության ստուգում,
- տարահանման ենթակա բնակչության թվաքանակի ճշտում,
- տարահանման մարմինների ծավալման պատրաստության բերում,
- տարահանման միջոցառումների ապահովման համար տրանսպորտի պատրաստության վերահսկողություն,
- առկա պաշտպանական կառույցների պատրաստության վերահսկողություն,
- անվտանգ վայրերում, ժամանակավոր տեղակայման կետերում տեղաբաշխման վայրերի պատրաստության հսկողություն:

Տարահանման անցկացման կարգադրություն ստանալիս՝

- տարահանման միջոցառումների անցկացման ընթացքում կառավարման և կապի կազմակերպում,
- տրանսպորտային ապահովման կազմակերպում,
- բաժնեչափական հսկողության, բնակչության սանիտարական մշակման, տեխնիկայի և հագուստի հատուկ մշակման (անհրաժեշտության դեպքում) կազմակերպում,
- տարահանվող բնակչության ընդունման, հաշվառման և տեղաբաշխման վայրեր տեղափոխման կազմակերպումը,
- բնակչության առաջնահերթ կենսաապահովման կազմակերպում:

## 3. Հանձնաժողովի իրավունքները

Հանձնաժողովն իրավունք ունի՝

3.1 Իր իրավասությունների շրջանակներում ընդունելու որոշումներ, որոնք ենթակա են պարտադիր կատարման կազմակերպությունների, հաստատությունների և ձեռնարկությունների համար՝ կապված տարահանման միջոցառումների անցկացման պլանավորման և բազմակողմանի նախապատրաստման հետ,
3.2 հարցում անել պետական կառավարման տարածքային և տեղական ինքնակառավարման մարմիններից, կազմակերպություններից, հաստատություններից անհրաժեշտ տվյալների մասին՝ բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանման հարցերի ուսումնասիրման և որոշումների ընդունման համար,
3.3 տարահանման միջոցառումների ապահովման հարցերով ունկնդրել պետական կառավարման տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, հաստատությունների պաշտոնատար անձանց, սահմանված կարգով անցկացնել խորհրդակցություն տարահանման մարմինների ներկայացուցիչների հետ,
3.4 տարահանման մարմինների գործունեության վրա սահմանել հսկողություն տարահանման միջոցառումների անցկացման պլանավորման և բազմակողմանի նախապատրաստման կազմակերպման հարցերով՝ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության մասնագետների ներգրավմամբ:

## 4. Հանձնաժողովի կազմակերպական կառուցվածքը

4.1. Հանձնաժողովի կազմակերպական կառուցվածքում ընդգրկվում են՝
- հանձնաժողովի ղեկավարությունը,
- վտանգավոր տարածքից բնակչության դուրս բերման հաշվառման խումբը,
- անվտանգ տարածքում բնակչության տեղաբաշխման հաշվառման խումբը,
- տրանսպորտային ապահովման խումբը,
- սննդամթերքի և նյութական արժեքների պաշարների հաշվառման խումբը:

4.2 Հանձնաժողովի կազմում նշանակվում են. տեղական ինքնակառավարման մարմինների, տարահանման միջոցառումների ապահովմանը մասնակցող կապ ապահովող կազմակերպության, տնտեսության օբյեկտների պաշտոնատար անձինք՝ բացառությամբ զորահավաքային կարգադրագիր ունեցող անձանց:

## 5. Հանձնաժողովի աշխատանքային կարգը

5.1 Հանձնաժողովի նախագահը կրում է անձնական պատասխանատվություն խաղաղ ժամանակ, արտակարգ իրավիճակների ծագման դեպքում և ռազմական դրության ժամանակ հանձնաժողովի վրա դրված խնդիրների կատարման համար:

5.2 Հանձնաժողովի աշխատանքը իրականացվում է տարեկան աշխատանքային պլանով: Հանձնաժողովի աշխատանքային պլանը մշակվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ համագործակցելով Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության մարզային փրկարարական վարչության հետ և հաստատվում է հանձնաժողովի նախագահի կողմից:

5.3. Հանձնաժողովի որոշումները ձևակերպվում են հանձնաժողովի արձանագրություններով և ստորագրվում հանձնաժողովի նախագահի և հանձնաժողովի քարտուղարի կողմից:

5.4 Հանձնաժողովի նիստերն անցկացվում են առնվազն եռամսյակը մեկ անգամ՝ հանձնաժողովի նախագահի ղեկավարությամբ: Հանձնաժողովի նիստերը և արձանագրությունների նախագծերը պատրաստում է հանձնաժողովի աշխատանքային խումբը:

5.5 Հանձնաժողովի առանձին պլանային և արտապլանային նիստերը կարող է անցկացնել հանձնաժողովի նախագահի տեղակալը՝ հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ:

5.6 Հանձնաժողովի անդամների աշխատատեղեր (հավաքի հաստատված վայրեր) ժամանելու համար սահմանվում են ժամկետներ.
- աշխատանքային ժամին՝ 30 րոպե,
- ոչ աշխատանքային ժամին՝ 1 ժամ 30 րոպե (ձմեռային ժամանակ՝ 2 ժամ):

## 6.Ֆինանսավորում

Տարահանման հանձնաժողովի գործունեության կազմակերպա-տեխնիկական ապահովումը իրականացվում է պետական բյուջեի միջոցների հաշվին :

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

---

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *ՈՐՈՇՈՒՄ*

*23 մայիսի 2019թվականի N 568*

### *ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի N 179-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 14-ի 179-Ն որոշումն՝*

## *<u>ՈՐՈՇՈՒՄ ԵՄ</u>՝*

*Հրազդան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 14-ի «Հրազդան համայնքի 2019 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 179-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ վերաբաշխումները՝*

*1.Ծախսային մասում ՝ 4 բաժնի 5 խմբի 1 դասի 51 ծրագրի «Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում» /4251/ հոդվածում «33644.0» թիվը փոխարինել «33563.0» թվով, «Մասնագիտական ծառայություններ» /4241/ հոդվածում«0» թիվը փոխարինել «81.0» թվով:*

*2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

*23 մայիսի 2019թ.*
*ք.Հրազդան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

---

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *ՈՐՈՇՈՒՄ*

*23 մայիսի 2019թվականի N 569*

### *ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդբաժնի պահանջների, հիմք ընդունելով Էդիկ Վիրաբյանի 2019 թվականի մայիսի 23-ի դիմումը.*

## *ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝*

*1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Չարենցի նրբանցք թիվ 20 տան բնակիչ Էդիկ Վիրաբյանին ժառանգության իրավունքով փոխանցված /Հրազդան նոտարական տարածքի նոտարի կողմից 2015 թվականի օգոստոսի31-ին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր՝ գրանցված սեղանամատյանում՝ 1727, ժառանգական գործ՝ 1727/ Հրազդան քաղաքի ԿենտրոնԱ-6 թաղամասում գտնվողհողամասինտրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան,Կենտրոն թաղամաս, Տիգրան Մեծի փողոց 44:*

*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Մ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

*23 մայիսի 2019թ.*
*ք.Հրազդան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *ՈՐՈՇՈՒՄ*

*23 մայիսի 2019թվականի N 570*

## *ԼԻԱՆԱ ՄԵԼԻՔՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի հիմքով հարուցվել է վարչական վարույթ Հրազդանի համայնքապետարանի աշխատակիցներ Ա. Ասատրյանի, Կ. Մանվելյանի և Ա. Զաքարյանի կողմից կազմված արձանագրության հիման վրա, համաձայն որի, վերջիններիս կողմից կատարված ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Կենտրոն թաղամասի 79 շենքի 36 բնակարանի բնակչուհի Լիանա Մելիքյանի կողմից կառուցապատման իրավունքով իրեն հատկացված 20.0քմ հողատարածքի փոխարեն, առանց համապատասխան թույլտվության 30.0քմ հողատարածքում իրականացրել է շինության կառուցապատում, ինչն առաջացնում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ մասով նախատեսված տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չորս հարյուրապատիկի չափով: Ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասով և Հրազդանի համայնքապետարանին առընթեր վարչական հանձնաժողովի 2019 թվականի փետրվարի 15-ի ժամը 11:00-ի նիստի N 1 արձանագրության.*

## *<u>ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝</u>*

*1.Լիանա Մելիքյանին ազատել վարչական պատասխանատվությունից:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Լիանա Մելիքյանին սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրը:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *Մ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

*23 մայիսի 2019թ.*
*ք.Հրազդան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*24 մայիսի 2019թվականի N 571*

*ԱՎՏՈՏՆԱԿԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Արմենուհի Միսակյանի 2019 թվականի մայիսի 24-ի դիմումը.*

*<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ</u>՝*

*1.Հայաստանի Հանրապետության քաղաքացի Արմենուհի Միսակյանին սեփականության իրավունքով պատկանող /սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ 1257953, տրված՝ 2005 թվականի մարտի 11-ին/ Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 110 շենքին հարող տարածքում գտնվող ավտոտնակին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Մ.Բաղրամյան թաղամաս թիվ 110/2:*

*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Ա. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

*24 մայիսի 2019թ.*
*ք.Հրազդան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *ՈՐՈՇՈՒՄ*

*27 մայիսի 2019թվականի N 572*

## *ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի, Կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 1831-Ն, 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն և թիվ 912-Ն որոշումներով հաստատված կարգերի, Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված «ԳԵՈԼԵՆԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից չափագրված և տրված շինությունների, դրանց սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ հողամասի հատակագիծը, Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնի 2019 թվականի մայիսի 23-ի թիվ 18 մասնագիտական եզրակացությունը.*

## *ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝*

*1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 234 շենքի թիվ 25 բնակարանի բնակիչ Լեոնիկ Սեփոյանի կողմից ինքնակամ կառուցած Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 237/8 հասցեում գտնվող, Հրազդան համայնքի սեփականություն հանդիսացող 143.13քմ ընդհանուր մակերեսով հողամասում 143.13քմ արտաքին մակերեսով բնակելի նշանակության ավտոտնակը և 150.91քմ արտաքին մակերեսով բնակելի նշանակության օժանդակ շինությունը ճանաչել օրինական և գրանցել որպես Հրազդան համայնքի սեփականություն:*

*2.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնին:*

*3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

***ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ*** ***Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ***

*27 մայիսի 2019թ.*
*ք.Հրազդան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*27 մայիսի 2019թվականի N 573*

### *ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ, ԱՎՏՈՏՆԱԿԻ ՈՒ ԴՐԱ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ*

*Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ մասի, Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով, Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնի 2019 թվականի մայիսի 3-ի թիվ15մասնագիտական եզրակացությունը և հաշվի առնելով կառույցն ու հողամասը կառույցն իրականացրած անձին գնման նախապատվության իրավունքով՝ ուղղակի վաճառքի միջոցով օտարելու վերաբերյալ 2019 թվականի մայիսի 23-ի N509 գրավոր առաջարկությունը և Աննա Մարտիրոսյանի կողմից տրված 2019 թվականի մայիսի 27-ի թիվ 227գրավոր համաձայնագիրը.*

## *<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ</u>՝*

*1.Հրազդան համայնքի սեփականություն հանդիսացող Միկրոշրջան թաղամաս 312/3 հասցեում գտնվող՝ 32.46քմ մակերեսով ավտոտնակը ճանաչել օրինական:*

*2.Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամաս 312/3 հասցեում գտնվող Հրազդան համայնքի սեփականությունը հանդիսացող, սույն որոշման 1-ին կետով օրինական ճանաչված 32.46 քմ մակերեսով ավտոտնակը /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N16052019-07-0072 գաղտնաբառ XJSZDLLTPLUB/ գինը սահմանել 56000 /հիսունվեց հազար/ դրամ և նույն հասցեում տարածագնահատման 2-րդ գոտում գտնվող ավտոտնակի համար առանձնացված 32.46քմ մակերեսով հողամասը 63000 /վաթսուներեք հազար/ դրամ կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքի միջոցով օտարել կառույցն իրականացրած անձ՝ Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 311 շենքի թիվ15 բնակարանի բնակչուհի Աննա Մարտիրոսյանին (այսուհետ գնորդ):*

*3.Գնորդը պարտավոր է գնման առաջարկն ընդունելուց հետո 30-օրյա ժամկետում*

*որոշման 2-րդ կետով ավտոտնակի համար սահմանված գումարը վճարել Հրազդան համայնքի բյուջեի թիվ 900125001504, իսկ հողամասի համար սահմանված գումարը թիվ 900125001140 գանձապետական հաշիվներին:*

*4.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնին:*

*5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

***ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝*** ***Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ***

*27 մայիսի 2019թ.*
*ք.Հրազդան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *ՈՐՈՇՈՒՄ*

*27 մայիսի 2019թվականի N 574*

## *ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ, ԱՎՏՈՏՆԱԿԻ ՈՒ ԴՐԱ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ*

*Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ մասի, Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով, Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնի 2019 թվականի ապրիլի 25-ի թիվ14մասնագիտական եզրակացությունը և հաշվի առնելով կառույցն ու հողամասը կառույցն իրականացրած անձին գնման նախապատվության իրավունքով՝ ուղղակի վաճառքի միջոցով օտարելու վերաբերյալ 2019 թվականի մայիսի 23-ի N508 գրավոր առաջարկությունը և Լիանա Պողոսյանի կողմից տրված 2019 թվականի մայիսի 27-ի թիվ 226 գրավոր համաձայնագիրը.*

## *<u>ՈՐՈՇՈՒՄ ԵՄ</u>՝*

*1.Հրազդան համայնքի սեփականություն հանդիսացող Միկրոշրջան թաղամաս 26/3 հասցեում գտնվող՝ 23.34քմ մակերեսով ավտոտնակը ճանաչել օրինական:*
*2.Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամաս 26/3 հասցեում գտնվող Հրազդան համայնքի սեփականությունը հանդիսացող, սույն որոշման 1-ին կետով օրինական ճանաչված 23.34քմ մակերեսով ավտոտնակը /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N16052019-07-0069 գաղտնաբառ ZBUTAMUNNZXS / գինը սահմանել 31000 /երեսունմեկ հազար/ դրամ և նույն հասցեում տարածագնահատման 3-րդ գոտում գտնվող ավտոտնակի համար առանձնացված 23.34քմ մակերեսով հողամասը 29000 /քսանինը հազար/ դրամ կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքի միջոցով օտարել կառույցն իրականացրած անձ՝ Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 22 շենքի թիվ 11 բնակարանի բնակչուհի Լիանա Պողոսյանին (այսուհետ գնորդ):*
*3.Գնորդը պարտավոր է գնման առաջարկն ընդունելուց հետո 30-օրյա ժամկետում որոշման 2-րդ կետով ավտոտնակի համար սահմանված գումարը վճարել Հրազդան համայնքի բյուջեի թիվ 900125001504, իսկ հողամասի համար սահմանված գումարը թիվ 900125001140 գանձապետական հաշիվներին:*

4.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնին:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

27 մայիսի 2019թ

ք.Հրազդան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *ՈՐՈՇՈՒՄ*

*27 մայիսի 2019թվականի N 575*

### *ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ, ԱՎՏՈՏՆԱԿԻ ՈՒ ԴՐԱ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ*

*Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ մասի, Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով, Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնի 2019 թվականի ապրիլի 25-ի թիվ 13 մասնագիտական եզրակացությունը և հաշվի առնելով կառույցն ու հողամասը կառույցն իրականացրած անձին գնման նախապատվության իրավունքով՝ ուղղակի վաճառքի միջոցով օտարելու վերաբերյալ 2019 թվականի մայիսի 23-ի N507 գրավոր առաջարկությունը և Արեգնազ Նալբանդյանի կողմից տրված 2019 թվականի մայիսի 27-ի թիվ 228 գրավոր համաձայնագիրը.*

## *<u>ՈՐՈՇՈՒՄ ԵՄ</u>՝*

*1.Հրազդան համայնքի սեփականություն հանդիսացող Միկրոշրջան թաղամաս 22/9 հասցեում գտնվող՝ 26.36քմ մակերեսով ավտոտնակը ճանաչել օրինական:*
*2.Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամաս 22/9 հասցեում գտնվող Հրազդան համայնքի սեփականությունը հանդիսացող, սույն որոշման 1-ին կետով օրինական ճանաչված 26.36քմ մակերեսով ավտոտնակը /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N16052019-07-0094 ծածկագիր՝ WPNZAX6YU696/ գինը սահմանել 35000 /երեսունհինգ հազար/ դրամ և նույն հասցեում տարածագնահատման 3-րդ գոտում գտնվող ավտոտնակի համար առանձնացված 26.36քմ մակերեսով հողամասը 33000 /երեսուներեք հազար/ դրամ կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքի միջոցով օտարել կառույցն իրականացրած անձ՝ Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 22 շենքի թիվ 4 բնակարանի բնակչուհի Արեգնազ Նալբանդյանին (այսուհետ գնորդ):*
*3.Գնորդը պարտավոր է գնման առաջարկն ընդունելուց հետո 30-օրյա ժամկետում որոշման 2-րդ կետով ավտոտնակի համար սահմանված գումարը վճարել Հրազդան համայնքի բյուջեի թիվ 900125001504, իսկ հողամասի համար սահմանված գումարը թիվ 900125001140*

*զանձապետական հաշիվներին:*

*4.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնին:*

*5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

***ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝*** ***Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ***

*27 մայիսի 2019թ.*
*ք.Հրազդան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *ՈՐՈՇՈՒՄ*

*27 մայիսի 2019թվականի N 576*

## *ԷԴՎԱՐԴ ԽԱՉԻԿԻ ԳԱԼՍՏՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի, Քաղաքացիական օրենսգրքի 33-րդ և 34-րդ հոդվածների Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի թիվ 631-Ն որոշմամբ հաստատված խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրության 9-րդ կետի 1-ին ենթակետի, հիմք ընդունելով Հրազդանի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2019 թվականի մայիսի 24 -ի թիվ 5 արձանագրությունը.*

*<u>ՈՐՈՇՈՒՄ ԵՄ</u>՝*

*1. Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 45 շենքի 5 -րդ բնակարանի բնակիչ Խաչիկ Էդվարդի Գալստյանին նշանակել դատարանի վճռով անգործունակ ճանաչված իր հոր՝ Էդվարդ Խաչիկի Գալստյանի / ծնված 21. 03.1957թ ./ նկատմամբ խնամակալ:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Խաչիկ Էդվարդի Գալստյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրը :*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* ——— *Մ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

*27 մայիսի 2019թ.*
*ք.Հրազդան*